# « Պինդ բոց »

## Ավարտվեց ակադեմիկոս Ալեքսանդր Մերժանովին նվիրված միջազգային գիտաժողովը

Համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս **Ալեքսանդր Մերժանովի** 75-ամյակը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան նշվեց միջազգային գիտական մեծ կոնֆերանսով:

Ինչպես հայտնեցին ՀՀ *ԳԱԱ լրատվական ծառայությունից*, հանրահայտ գիտնականին շնորհավորելու համար Երեւան էին եկել քիմիական ֆիզիկայի բնագավառի առաջատար գիտնականներ տարբեր երկրներից, մասնավորապես Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ճապոնիայից, Չինաստանից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Իսրայելից, Ուկրաինայից, Վրաստանից եւ այլ երկրներից:

Կոնֆերանսի բացման օրը իր շնորհավորական ուղերձն էր հղել նաեւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը:

Գիտաժողովի բացման օրը ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը Ալեքսանդր Մերժանովին հանձնեց ակադեմիայի արտասահմանյան անդամի դիպլոմը:

Նույն օրը Ա. Մերժանովն արժանացավ նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ոսկե մեդալին, որը հոբելյարին հանձնեց փոխնախարար Արա Ավետիսյանը:

*Ալեքսանդր Մերժանովը ծնվել է 1931թ. նոյեմբերի 27-ին, Դոնի Ռոստովում, նորնախիջեւանցի հայերի ընտանիքում:*



*1954 թ. նա մեկնել է Մոսկվա եւ ընդունվել աշխատանքի այն ժամանակ արդեն հայտնի ԽՍՀՄ ԳԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, ապագա Նոբելյան մրցանակակիր ակադեմիկոս Նիկոլայ Սեմյոնովի մոտ:*

*Այստեղ նա սկսել է զբաղվել պայթուցիկ նյութերի բոցավառման ու այրման պրոցեսների ուսումնասիրությամբ, որը լայն ճանաչում բերեց նրան:*

*1967թ. նա համահեղինակների (Վալենտին Շկիրոյի եւ Ինա Բորովինսկայայի) հետ անսպասելի արդյունք ունեցավ. հայտնաբերվեց մի նոր երեւույթ, որը կոչվեց "Պինդ բոց": Այս հայտնագործության հիմքի վրա ձեւավորվեց անօրգանական դժվարահալ նյութերի եւ միացությունների արտադրական մի նոր մեթոդ, որն անվանվեց բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզ (ԲԻՍ): Այն հաստատվեց որպես նոր ուղղություն՝ հիմնված այրման տեխնոլոգիաների եւ նյութաբանության վրա:*

*Ա.Գ. Մերժանովը մեծ ջանքեր գործադրեց գիտության այս նոր ու հեռանկարային բնագավառում Հայաստանից երիտասարդ կադրեր պատրաստելու գործում: Նրա ակտիվ գործունեության շնորհիվ արդեն 1969 թ. Երեւանում անցկացվեց այրման եւ պայթման պրոցեսներին նվիրված երկրորդ համամիութենական գիտաժողովը, որի ընթացքում նաեւ պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանի կառավարության ու Ակադեմիայի ղեկավարության հետ՝ ուսանողներ, ասպիրանտներ ու երիտասարդ գիտնականներ ուղարկել Չեռնոգոլովկա, ԲԻՍ բնագավառում համապատասխան գիտելիքներ ու աշխատանքային փորձ ձեռք բերելու համար:*

*Սկսած 80-ական թվականների սկզբից՝ ԲԻՍ մեթոդով անօրգանական նյութերի ստացման եղանակը լայն ճանաչում գտավ նաեւ մի շարք արտասահմանյան երկրներում (ԱՄՆ, Ճապոնիա, Չինաստան, Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա եւ այլն)՝ համաշխարհային համբավ բերելով մեծ գիտնականին: 1987թ. Մերժանովի կողմից հիմնադրվեց ԽՍՀՄ ԳԱ կառուցվածքային մակրոկինետիկայի եւ նյութաբանության ինստիտուտը, որը ներկայումս հանդիսանում է ԲԻՍ պրոցեսների հետազոտման համաշխարհային նշանակության կենտրոնը:*

Գիտաժողովի փակումը տեղի ունեցավ դեկտեմբերի 1-ին: